ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

# ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.*
*ԹԻՎ 1307*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ի Ն

Կից ներկայացվում է Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու 2014թ. հոկտեմբերի 21-ի նիստում /արձ. 21/ ընդունված որոշումները:

Առդիր՝ 92 թերթ:

X

Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

***Կատարող՝***
*Գ. Դապումյան*
*Հեռ. /0232/ 3-52-02*

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԲՈՏՈՇԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԲՈՏՈՇԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ (ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ) ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***N 1-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 22 կետի պահանջներով, հիմք ընդունելով 27.09.2014թ-ին Աշտարակ քաղաքում՝ Աշտարակ համայնքի ղեկավար Ա. Անտոնյանի և Ռումինիայի Բոտոշան նահանգի Բոտոշան քաղաքի քաղաքապետ Օվիդիու Յուլիան Պորտարյուկի կողմից Հայաստանի Հանրապետության Աշտարակ համայնքի եւ Ռումինիայի Բոտոշան նահանգի Բոտոշան քաղաքի միջև կնքված Համագործակցության համաձայնագիրը (Բարեկամության պայմանագիրը), համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Վավերացնել Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի և Ռումինիայի Բոտոշան նահանգի Բոտոշան քաղաքի միջև համագործակցության համաձայնագիրը (Բարեկամության պայմանագիր):

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

## Արձանագրության պրեամբուլա Համագործակցության համաձայնագիր

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մենք, Հայաստանի Հանրապետության Աշտարակ համայնքի ղեկավար Արմեն ԱՆՏՈՆՅԱՆԸ և Ռումինիայի Բոտոշան նահանգի Բոտոշան քաղաքի քաղաքապետ Օվիդիու Յուլիան ՊՈՐՏԱՐՅՈՒԿԸ, ընդառաջելով երկու քաղաքների բնակչության ցանկությանը եւ իրական պահանջներին, գնահատելով մեր պատմական կապերը, ազատության ընդհանուր ոգին, բարեկամությունը, որը ոգեշնչում է մեր ազգերին, հանդիսավոր պարտավորություն ենք ստանձնում միջոցներ ձեռնարկել կնքելու Համագործակցության համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Աշտարակ համայնքի եւ Ռումինիայի Բոտոշան նահանգի Բոտոշան քաղաքի միջև:

Համատեղ համաձայնությամբ, որոշում ենք սույն Բարեկամության պայմանագրի շրջանակներում իրականացնելու հետեւյալ հիմնական նպատակները.

- մշտական համագործակցություն մշակույթի, գիտության, արվեստի եւ սպորտի բնագավառներում,
- զբոսաշրջության ոլորտում զարգացման ծրագրերի մշակում,
- երկու քաղաքների բնակչության և հաստատությունների միջեւ տարաբնույթ կապերի հաստատում,
- անհրաժեշտ ջանքերի գործադրում մեր համայնքների միջեւ բարեկամության եւ համագործակցության կապերի խթանման համար,
- համատեղ միջոցառումների կազմակերպում մեր համայնքների ոգու եւ ավանդույթների դրսեւորման նպատակով,
- երիտասարդության շրջանում համագործակցության ծրագրերի իրականացում ազատության ոգուն եւ մեր համայնքների միջեւ բարեկամությանը նպաստելու նպատակով,
- փոխշահավետ տնտեսական հարաբերությունների զարգացում:

Վերը նշված ուղղություններով գործողությունների մեջ կներառվի նաև «Բոտոշանի մետրոպոլիայի շրջան» միջհամայնքային զարգացման միությունը՝ ի դեմս նախագծի ղեկավար Ֆլորին Սիմիոն ԷԳՆԵՐԻ:

Սույն Բարեկամության պայմանագիրը ներկայացնում է մեր համատեղ կամքը՝ հնարավորինս կարճ ժամանակում ավարտին հասցնելու պաշտոնական բարեկամացումը, մանրամասնելու եւ կոնկրետացնելու թվարկված նպատակները՝ այսպիսով հասնելով տեւական եւ արդյունավետ կապերի հաստատման:

Կնքված է Աշտարակ քաղաքում, _____ սեպտեմբերի 2014թ, երկու հավասարազոր բնօրինակով՝ հայերեն եւ ռումիներեն:

| | |
|---|---|
| **Արմեն ԱՆՏՈՆՅԱՆ** | **Օվիդիու Յուլիան ՊՈՐՏԱՐՅՈՒԿ** |
| **Աշտարակ համայնքի ղեկավար** | **Բոտոշանի քաղաքապետ** |

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

*N 2-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 69 հոդվածի առաջին մասի, <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 35/1 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Ըստ ստորև բերված վերլուծության, համայնքի 2014թ.-ի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականն ընդունել ի գիտություն:

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 301833.7 | 22697.8 | 324531.5 |
| Ծախսային մաս | 266879.6 | 38480.8 | 305360.3 |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԴԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ԲԱՑԱԿԱՅՈՒՄ ԷՐ՝ Ս. ՕՎՈՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

### ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

***N 3-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով «2014թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու» ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/3 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև, /հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 429514,9 | 25000,0 | 429514,9 |
| Ծախսային մաս | 429514,9 | 48511,4 | 453026,3 |
| Դեֆիցիտ | ------ | -23511,4 | -23511.4 |
| Պահուստային ֆոնդ | 25000,0 | | |

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.01.2014թ. 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

***N 4-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 77, 78 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Ա.Այվազյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Ե. Չալաբյանի գրությունը 2014-2015թթ. ուսումնական տարում դպրոց ընդունված երեխաների քանակի կտրուկ ավելացումը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 10.06.2014թ.-ի հմ 629-Ն հրամանով հաստատված <ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2014-2015 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները>, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 29.01.2014թ.-ի հմ 6-Ա որոշման հավելված 4-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   - աշխատակիցների թվաքանակը սահմանել՝ 43,
   - հաստիքային միավորները՝ *Մանկավարժ 1-ին կարգ - բարձրագույն կրթություն, 15 տարուց ավելի ստաժ՝ 9,*
     *Մանկավարժ 3-րդ կարգ- միջին մասնագիտական կրթություն, 0-15 տարի ստաժ՝ 9:*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թ.-ի սեպտեմբերի 1-ից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

**ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

***N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 26-րդ կետի, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 77, 78 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2014թ.-ի հմ 287-Ն, 19.12.2013թ-ի հմ 1414-Ն որոշումները, ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա.Գևորգյանի 09.09.2014թ-ի հմ 10/6718-14 գրությունը, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակի քաղաքապետարանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը 2014թ-ի հուլիսի 1-ից սահմանել՝

- Բաժնի պետ- 256 623.2 դրամ
- Առաջատար մասնագետ-133 602.8 դրամ
- Առաջատար մասնագետ – 133 602.8 դրամ

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

***<u>N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16 հոդվածի 26-րդ կետի, <Նվազագույն ամսական աշխատավարձի մասին> ՀՀ օրենքի, <Կուտակային կենսաթոշակի մասին> ՀՀ օրենքի, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 77, 78 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում՝ 2014թ-ի հուլիսի 1-ից, նվազագույն աշխատավարձի նվազագույն շեմը սահմանել 66138 դրամ, իսկ 1974թ-ի հունվարի 1-ից հետո ծնված և ՀՈԱԿ-ներում աշխատողների համար՝ 70822 դրամ:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -1*

| | | |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## <ԱՇՏԱՐԱԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ> ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

*N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 01.08.2014թ. N 01/2446-14 գրությունն ու <Այլընտրանքային ծառայության հարցերով> հանրապետական հանձնաժողովի հունիսի 25-ի N 1-Ա որոշմամբ Կարբի գյուղի բնակիչ Սևակ Զոհրաբի Սաֆարյանին այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու համար <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ ուղարկելու փաստը, ղեկավարվելով <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 17, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, նշված անձի այլընտրանքային աշխատանքային ծառայությունը պատշաճ կազմակերպելու նպատակով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.

1. Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի <Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին> N1-Ա որոշումն /քաղվածք/ ընդունել ի գիտություն /հավելված, հավելված 2/:

2. <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն և բանվորների թիվն ավելացնել 1 միավորով /7+1/:

/Փոփոխությունը կատարել համայնքի ավագանու 29.01.2014թ. N6-Ա որոշման հավելված 9-ում/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱԹԵՎՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

***N 8-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով<Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Հողի հարկի մասին> օրենքի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի բնակիչ Վազգեն Միրզախանյանի դիմումն այն մասին, որ ինքը հնարավորություն չունի տեղական բյուջեի նկատմամբ ունեցած ապառքն ամբողջությամբ մարելու, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա կողմից մարվել է ապառքի մի մասը, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Աշտարակ քաղաքի բնակիչ Մաթևոս Միրզախանյանին տալ հարկային արտոնություն՝ 39 100 ՀՀ դրամի չափով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը նոյեմբերի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Տ. ՉԱԼԱԲՅԱՆ/*

***N 9-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Գույքահարկի մասին> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի բնակիչ Հովհաննես Վարդանի Եղիազարյանի դիմումն այն մասին, իսկ ինքը հնարավորություն չունի տեղական բյուջեի նկատմամբ ունեցած ապառքն ամբողջությամբ մարելու, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա կողմից մարվել է ապառքի մի մասը, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Աշտարակ քաղաքի բնակիչ Հովհաննես Վարդանի Եղիազարյանին տալ հարկային արտոնություն՝ 77 000 ՀՀ դրամի չափով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

*N 10-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 13.10.2014թ. N203, 15.10.2014թ. N 205 և <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն> ՊՈԱԿ-ի 17.10.2014թ. N1316 գրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 14.01.2010թ. N 16-Ն որոշման և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող Երևան-Աշտարակ Մ-1 ճանապարհահատվածի արտաքին լուսավորման ապահովման նպատակով տրանսֆորմատորային ենթակայաններ տեղադրելու համար Հայաստանի Հանրապետությանն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով համայնքային սեփականություն հանդիսացող 0091-0001 և 0001-0085 ծածկագրերով հողամասերից՝ յուրաքանչյուրից 9քմ տարածք գործող օրենսդրության պահանջներին համապատասխան հատկացնելու և անհրաժեշտության դեպքում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ:
2. Անհրաժեշտություն առաջանալու դեպքում տրամադրվող հողամասերի սահմանանիշերի ճշտման իրավասությունը վերապահել քաղաքապետին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՈՐՊԵՍ ԱՆՀԱՅՏ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ 125-035 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

*N 11-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. հմ.1398-Ն որոշմամբ համայնքին փոխանցված 125-035 ծածկագրով 1240քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողատարածքը փոխանցվել է որպես /անհայտ/ ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողատարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն, հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. հմ. 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32 հոդվածի 17 կետի, 38 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող125-035 ծածկագրով 1240քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ

ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը հոկտեմբերի 2014թ.*

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՄԱՐՏԻ 30-31-Ի ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 12-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*2014թ. մարտի 30-31-ին տեղի ունեցած ցրտահարությունից տուժած, ՀՀ կառավարություն ներկայացրած օգնության ցուցակներից դուրս մնացած սեփականատերերին օգնություն ցուցաբերելու և 2014թ.-ի հողի հարկը զիջելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.04.2014թ. հմ. 532-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ քաղաքի նախկինում կազմած և ցուցակներից դուրս մնացած 34 սեփականատերերին ընդգրկել 2014թ. հողի հարկի զիջման ցուցակում /ցուցակը կցվում է/:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն